

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

Դ Ի Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ»Ի

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ՝ ՄԱՍԻՆ

25. Բայց քեզ գայն եւս իշխիցեն ամբարշտոյ, քեզ եւ որ պատնառ ըստուերին է, ի միջոյ բառնալոց իցէ (Մ 99.25-26, Բ 225) — «Սակայն համարձակուամ են անօրինաբար այն էլ ասել, թէ ինչ որ ստուերի պատճառն է, մէջտեղից վերանալու է» (143) :

Ոստը Պղատունի եւ հետեւորդների մասին է. Թարգմանիչը նրանց վերագրել է մի միտք, որ նրանք չեն արտայայտել: Եղնիկը Պղատունի մասին գրել է. «Իսկ Պղատուն, որ Աստուած եւ հիւղ եւ իդոս էութեամբ զնէ» (Մ 99.8, Բ 224) եւ «Ջաշխարհ արարած եւ եղծանելի ասէ, եւ երբեմն եւ այլքն՝ մշտրն-ցեմաւորակից Աստուծոյ» (Մ 99.20, Բ 225): Պղատունը եւ միւսները չեն ասել, թէ Աստուած, որ ստուերի, այսինքն՝ այս աշխարհի պատճառն է, մէջտեղից վերանալու է: Եթէ ասած լինէին, Եղնիկը իշխիցեն ստորագասականով չէր մէջբերի նրանց միտքը: Կարծում ենք, որ այս բայը ներկայով Թարգմանելու չէ եւ բնագրի գայն բառի վրայ բացաւանչական նշան զնելով կարդալու ենք այդ նախադասութիւնը, որով Եղնիկի հեղինակն է արտայայտուել. «Բայց թէ այն էլ համարձակուելու են ամբարշտաբար ասել, թէ ինչ որ ստուերի պատճառն է, այն էլ մէջտեղից վերանալու է»:

26. Ի հասումն հասակի եկն յաշխարհ ի կատարեալ գիտութիւնն, որպէս յայսմ աշխարհի մարքի հասանել գիտութեան (Մ 102.22-24, Բ 232) — «Հասումն հասակում աշխարհի մէջ հասում կատարեալ գիտութեան, որովհետեւ այս աշխարհում կարելի է հասնել գիտութեան» (146) :

Այս Թարգմանութիւնը Գ. Ոստուերեանի Թարգմանութիւնից տարբերում է միայն նրանով, որ բնագրի մարքի բայը մէկը Թարգմանել է «պէտք է» (Ոստ., որ սխալ է), իսկ սա՝ «կարելի է», որ ճիշտ է:

Մարիէսը Գ. Ոստուերեանի (ինչպէս եւ Վերէրի) Թարգմանութիւնը քննադատելիս նկատել է տուել իրաւամբ (ծան. 822), որ բնագրում ունենք յաշխարհ՝ ուղեւորման հայցական, որ Թարգմանուել է «աշխարհի մէջ»՝ ներդոյական «աշխարհում» նշանակութեամբ: Սա ճիշտ կը լինէր, եթէ բնագրում լինէր «յաշխարհի»: Մարիէսը Շմիդ-Գալէմբերեանի Թարգմանութեան հետ համամայն է. այստեղ եկն յաշխարհ արտայայտութիւնը նշանակում է «ճշտուեց»: Ուստի (Պաւլոս) ի հասումն հասակի եկն յաշխարհ ի կատարեալ գիտութիւնն բառերը նշանակում են. «(Պողոսը) հասումն հասակում ճշտուեց կատարեալ գիտութեան»: Շարունակութիւնը՝ որպէս յայսմ աշխարհի մարքի հասանել գիտութեան՝ «ինչպէս որ (որքան որ) այս աշխարհում կարելի է հասնել գիտութեան». այս նախադասութեան մէջ բնագրի որպէս բառը չի նշանա-

Ի Եզնիկ Կոզրացի, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ. Աղանդների հերթում: Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանոթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի: Երեւան, 1970:

կուսմ «որո՞վհետեւ», ինչպէս թարգմտեցէ են Գ. Խաչատուրեանը եւ Ա. Արբա-
համեանը:

27. Գոմեայ եկեղեցւոյ լիցի մմանոյ, որ ընդ գետինն քարշէր՝ եւ եղեւ
շաղորդ արարչութեամբ արարչին (Մ 110-Ձ-4, Բ 251) — «Գոնէ Ծմանուէր Հիւ-
լէին, որը (աստուծոյ) դէպի գետին քաշեց եւ ստեղծողի արարչութեանը մաս-
նակից դարձաւ» (156):

Մարիէսի հետ (Թարգմանութիւն 359) կարծում ենք, որ ընդ գետինն
քարշէր բառերը նշանակում են «գետնի վրայ էր քարշ գալիս» կամ «սողում».
այսինքն՝ քարշէր անցեալ անկատարը չեզոք սեռի նշանակութիւն ունի այս-
տեղ, եւ ընդ գետինն ուղեւորման հայցական չէ:

Մեր դիտողութիւնների մէջ յաճախ յիշուել ենք Նոթ հայկազեան քա-
ռարանի վրայ . սակայն այս անգամ համակարծիք չենք նրան, ուր քարշնմբ քա-
լի «քայել, քաշքշել, քաշկրտել իջուցանել» ներդրածական սեռի նշանակու-
թեան համար բերուած վկայութիւններից մէկը ինչիկի նախադասութեան զբնդ
դետմին քարշէր» հաստատածն է:

Մեզ թւում է, որ Ա. Արբահամեանը եւ նրանից առաջ Գ. Խաչատուր-
եանն այս բառերը «(աստուծոյ) դէպի գետին քաշեց» թարգմանելու համար նը-
կատի են ունեցել հետեւեալը: Եղիկը գրել է, թէ ըստ Մարկիոսի, Հիւլը բը-
նակում էր երկրի վրայ («յերկրի հիւլն» էր), «օտար աստուածք»՝ առաջին
երկրքում, «օրինաց աստուածք»՝ երկրորդում, երրորդում, վերջինիս գործե-
րը, էին: Օրինաց աստուածք իջնում է երկրի վրայ հւ հիւլից առած կաւին
ոգի ներշնչելով ստեղծում է Աղամին: Աւելի լաւ է լսենք Եղիկին. «Եւ տես-
եալ աւրինացն աստուծոյ՝ թե գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնել ի սմա
մարդ: Եւ իջեալ առ հիւլն յերկիր, առէ տուր ինձ ի կաւոյդ քումէ, եւ յինէն
ոսմ ոգի. եւ արասցոք մարդ ըստ նմանութեան մերոս» եւ այլն (Մ 107-Ձ-7,
Բ 244): Ուստի օրինաց աստուածն իմեմակամ է իջել երկիր. եւ ոչ թէ Հիւլն
է նրան քաշել դէպի գետին, այս . այսի բուն կամ փոխարեական՝ «հրապուրել»
բմաստով:

Քանի որ Հիւլը երկրի վրայ էր բնակում, ուստի կարծում ենք, որ
լից գետինն քարշէր բառերը նշանակում են «գետնի վրայ էր քարշ գալիս» կամ
«սողում», եւ այս արտայայտութեան մէջ նկատելի է Եղիկի հեգնանքը. Գե-
տնին սողալով հանդերձ Հիւլը հաղորդակից եղաւ Աղամի արարչագործու-
թեան՝ «եզեւ հաղորդ արարչութեան արարչին» (Եղիկ):

Ա. Արբահամեանի եւ Գ. Խաչատուրեանի թարգմանութիւնը քերական-
նօրէն էլ անընդունելի է թւում մեզ նրանով, որ քարշէր անկատարը թարգ-
մանուել է անցեալ կատարեալով, ինչպէս յաջորդող եղեւ: Մինչդեռ կար-
ծում ենք, որ այստեղ անկատարն արտայայտում է այն ժամանակի տեսողու-
թիւնը, երբ Հիւլը «ընդ գետինն քարշէր», եւ օրինաց աստուածը երկրի վրայ
իջաւ ու նրա համագործակցութեամբ Աղամին ստեղծեց: Իսկ եղև կատարեալն
արտայայտում է արարչագործութեան նրա մասնակից լինելու փաստը: Ուստի
այդ երգու բայերի միջեւ գրուած եւ չաղկուպը ներհակական է եւ նշանակում է
«բայց, սակայն, այնուհանդերձ», բայց ա՛յ «եւ», ինչպէս թարգմանուել է:

28. Զեմ իմէ ընդհատ ի հեքսմոսաց (մարկիոնականք. Մ. Մ.) : Այլ
պալէս մոֆա տառաւածս բազմալ քանն, եւ առֆա աստուածս քարոզեմ (Մ 110-
10-11, Բ 252) — «Հեթանոսներից ոչնչով չեն տարբերում. որովհետեւ ինչպէս
որ նրանք բազմաթիւ աստուածներ են ընդունում, սրանք էլ մոյն աստուածնե-
րն են քարոզում» (156):

Բնապրի այլ բառը չի նշանակում «որովհետեւ», այլ՝ «ընդհակառակըն» :

Հեթանոսներն իրօք քազմաքիւ աստուածներ են ընդունել. իսկ «ըբրանք», այսինքն՝ մարկիոնականները, նոյն աստուածները չեն քարոզել, այլ՝ «օրինաց աստուած», Հիւզը՝ «գլուխթիւն երկրի» եւ «օտար աստուածը» : «Նոյն» բառը չկայ բնապրում, ուստի կարիք չկայ այդպիսի ճշգրտութիւն վերադրելու հեղինակին : Այդ բառը փակալծերում սնդամ գրուած չէ թարգմանութեան մէջ :

29. Թո՞ք սակս եւ հարքն մեր սուրբ եպիսկոպոս սահմանեցին կանոնքս. եթե ոք հաւատացեալ միւս ոչ ուտիցէ, եւ բանջար ընդ մտոյ եփեալ իցէ, եւ ի բանջարոյն ոչ կամիցի ճաշակել, ճգովեալ լիցի : Ընդէ՞ք. նախ... (Մ 124. Ծ-8, Բ 287) — «Իրա համար էլ մեր հայերը՝ սուրբ եպիսկոպոսները, այս կետնը սահմանեցին՝ Եթէ միւս չուտող որեւէ հաւատացեալ մսով բանջար եփելու զէպրում չկամենայ այն բանջարից ուտել, թող նոյնովուծ լինի» : Ինչո՞ւ : Նախ...» (175) :

Մարիէնը նախադասութեան սկզբի յար ապա բառերը մեկնարանել է որպէս հարցական, նկատել տալով, որ դրա հոմանիշն է յաջորդ նախադասութեան ընդէ՞ք հարցականը. համաձայն ենք նրան, որովհետեւ թարգմանչի «դրա համար էլ» բառերը ոչ մի հիմք չունեն նախորդ սողերում :

Կարծում ենք, որ բնապրի կանոնս բառը թարգմանելու է «կանոններ», ինչպէս արել են Գ. Պաշտոնարեանը (էջ 142) եւ Մարիէնը (8 412) : Արդարեւ, հակառակ թարգմանութեան, մենք բնապրում երկու կանոն կամ երկու նորովք ենք նկատում. 1. Թող նոյնովուծ լինի միւս չուտող հաւատացեալը («Եթէ ոք հաւատացեալ միւս ոչ ուտիցէ») . 2. Թող նոյնովուծ լինի նաեւ այն հաւատացեալը, որ ոչ միայն միւս չի ուտում՝ այն պիղծ համարելով, այլեւ մսի հետ եփած բանջարից էլ է հրաժարում ճաշակել («...եւ բանջար ընդ մսոյ... ոչ կամիցի ճաշակել») : «Կանոնագիրք հայոց» հրատարակութեան երկու հատորներում (աշխատասիրութեամբ Վաղդէն Յակոբեանի, հատ. Ա, Երեւան, 1964, հատ. Բ, 1971) առարկայական ցանկերից օգտուելով (միւս եւ բանջար)՝ չգրաւորեմ ի կանոն, որ նոյնովք երկու կէտերն էլ միասին սահմանուած լինեն : Այլ՝ առանձին կանոնում կարդում ենք հետեւեալը մասնակրութիւնը պիղծ համարողների մասին. «Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւազ կամ բնախն իսկ ի քահանայական կարգէ յամուսնութենէ, ի մտոյ եւ ի գինեւոյ ոչ վասն ճշմարտութեան, այլ պիղծ վարկանելով, զայնոսիկ ի բաց մեկնի, մոռացեալ թէ ամենայն ինչ յոյժ բարի է, զի արու եւ էջ արար Աստուած զմարդն, այլ հայհոյելով անպոստեպէզ զպործաւորութիւնն՝ կամ ուղղեցի կամ լուծցի եւ յեկեղեցւոյն ի բաց ընկեցի. նմանապէս եւ ժողովրդական ոք» (Կանոնագիրք հայոց, հատ. Ա, էջ 88, Կանոնք Կղեմայ) :

Հետեւեալ երկու կանոնները վերաբերում են մսով եփուած բանջար ուտելուց հրաժարուողներին : «Ոյք յուրտի անդ իցեն երիցունք իսմ սարկաւազունք կամ այլ ոք ի պաշտաւնէից եւ հեռի իցեն ի մսոյ եւ միտք իւրեանց յաժար իցեն ի ճաշակել, համարձակ կերիցեն եւ մի գաղտնաբար. ապա թէ կամք իցեն՝ պահիցեն, ընդունին կանոնքս գերկոսին : Ապա եթէ ոք պիղծ համարիցի կամ զբանջար եւ գիտց, որ մտաւ իցէ, ոչ ընդամին զմ կարգէ եկեղեցւոյ» (Անդ, էջ 164, Կանոնք Անկիւրեայ) : «Ոյք յուրտի իցեն երիցունք եւ սարկաւազունք, եւ հեռի իցեն ի մսոյ, կամ եղև զի ճաշակեցեն, ապա եթէ կամենային՝ պահեցեն ի մտոյ. ապա եթէ պղծեցին կամ պիղծ համարեցին միմեկեւ զմանջարն որ ընդ մտոյն անկամիցի կամ հպիցի ի միմեկ չուտիցեն, եւ ոչ ան-

սայցեն կանոնացս, լուռ լիցին յաշտիճանէ քահանայութեանն» (Անդ, Հատ. Բ, էջ 77, Կանոնք երկրորդ ներկաւանք) :

Այսպիսով կործում ենք, որ նորոյքին վերաբերող նախադասութիւնք կարելի է թարգմանել, ըստ այդ կանոնների. «Եթէ Հաւատացեալ մէկը միտ չուտէ, եւ («Եթէ»). առաջին կանոնի եք-ն-ն վերաբերում է նաեւ երկրորդին կամ պայմանի ստորոգյաւանին նախադասութիւններից նաեւ երկրորդին, ինչպէս յաճախ Եղնիկի երկում» մսի հետ բանջար եփուած լինի, եւ բանջարից էլ չկամենայ ճաշակել, թող նորոյում լինի» : Գ. Պաշտուրեանի թարգմանութիւնը շատ յստակ է. «...Սուրբ եպիսկոպոսները կանոններ սահմանեցին. 'Եթէ Հաւատացեալ մէկը միտ չ'ուտեր, եւ միտով բանջար եփուած ատեն' բանջարէն չ'ուզեր ուտել, — նորոյեալ ըլլայ'» (էջ 142). «Բանջարէն» բառից յետոյ պէտք է «ալ» : Բնագրի եւ շաղկապը թարգմանելու համար :

30. Եւ Առաքեալ՝ այր հաւատարիմ՝ կոչէ զկուսանն : Բայց հայեցեալ ի բնութիւն՝ չիշխէ յայտ հրաման տալ, այլ ակնարկելով յաւատարեցանէ. որպէս եւ Տէրն ակնարկէ, այլ ոչ ստիպէ (Մ 124-20-22, Բ 28Բ) — «Եւ առաքեալը կայսերին վստահելի մարդ է համարում, բայց, նայելով բնութեանը, չի համարձակուած քաջայայտորէն հրամայել (կոչս դառնալ), այլ հասկացնելով համոզում է, ինչպէս որ տէրն էլ հասկացնում է եւ ոչ ստիպում» (175-176) :

Եթէ բնագրի այր հաւատարիմ կոչէ զկուսանն բառերը նշանակէին «կոյսերին մատահելի մարդ է համարում», Գ. Պաշտուրեան՝ «ընդունելի մարդ կը կոչէ կոյսերն» (էջ 143), ապա դասական դրաբարի քերականութեան համաձայն սովորաբար կ'ունենայինք «արս հաւատարիմս», որոնք թուով համաձայնած կը լինէին զկուսանն ուղիղ խնդրի հետ. «Եթէ ներդրածական բային սեռի խնդիրը յոգնակի է, գոյական բնութեան խնդիրը սովորաբար յոգնակի կը դրուի» (Փերականութիւն հայկագնեան լեզուի, 1885, էջ 225) : Արդ, հենց թարգմանութեան մէջ ունենք «գոյական բնութեան խնդիր»՝ այր, հաւատարիմ ածականը սրա որոշին է : Ուստի սխալ է թարգմանութիւնը :

Մարիէսը հրատարակութեան մէջ բուժ նշանը զնելով Առաքեալ եւ հաւատարիմ բառերի վրայ, այր հաւատարիմ բառակապակցութիւնը որպէս քաջայայտիչ է ընդունել Առաքեալ երթակային՝ «Եւ Առաքեալը՝ հաւատարիմ մարդ, կոչ է անում կոյսերին» (տղամարդ կամ կին) կամ կուսութեան : Եղնիկը չի մէջբերել այդ կոչը, որի աղբիւրը ցոյց է տուել Մարիէսը՝ Ա Կորնթ., Ի, 25, ուր կարդում ենք. «Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ տամ որպէս ողորմելոյ ուրուք ի Տեառնէ հաւատարիմ լինելը» : Ուստի Առաքեալն է հաւատարիմ իր վարդապետի ուսմունքին եւ կուսութեան մասին ոչ մի հրաման չի տալիս, քանի որ այդպիսի հրաման չի ստացել :

Թարգմանութեան մէջ «հրամայել» բայից յետոյ փակագծերում աւելացուած է «կոյս դառնալ» : Քանի որ ըստ մարդկային բնութեան սա ակնարկի է, ուստի նախընտրելի էր «մնալ» փոխանակ՝ «դառնալ», եթէ երբէք այս յաւելումն անհրաժեշտ էր : Թարգմանիչը թերեւ առարկի, թէ «կոյս դառնալ» ասելով հասկանում է այսօրուայ իմաստով «կուսակից», վանական կոյս դառնալ եւ այլն : Բայց ինչպէս Առաքեալն իր Թղթի է գլխում, այնպէս էլ Եղնիկն այստեղ խօսում է ամուսնանալու կամ ամուրի մնալու մասին :

31. Եւ գնոր կտակարանս աւտարտի համարի ի հնոյն եւ յայնմանէ, որ ի նմայն խաւսէր :

Ձյարութիւն մարմնայ արիամարիէ (Մ 128-29-30, Բ 297) — «Եւ որ կտակարանը Հնին խորթ է համարում եւ ճրանից էլ արհամարում է մարմինների յարութիւնը, որի մասին խօսում է այնտեղ» (180) :

Կարծում ենք, որ Ա. Աբրահամեանը ամենեւին չի հասկացել Եզնիկի միտքը: Թերեւս պատճառը Վենետիկի Հրատարակութեան կենտրոնացումն է. «Եւ վնոր կտակարանս օտարոտի համարի ի հնոյն. Կէ յամայն խօսէր, դարձեալ խօսէր, զյարուցիլն մարմնոյ արհ համարէ՞»: Ինչպէս տեղանք, Մարիին իրաւամբ արտանքին նախադասութիւն է համարել վերջին երեք բառերը: Քննարկուող փոքրիկ հատուածում, որ Մարկիոնի ազանդէ քննադատութեան «գիրքը» եզրափակող վերջին էջից է, իրօք ունենք մարկիոնեան երկու դրոյթ:

Առաջին՝ Մարկիոն «Եւ վնոր կտակարանս օտարոտի համարի ի հնոյն եւ յամայնէ, որ ի նմայն խաւսէր» — «Մարկիոնը նոր կտակարանը օտարոտի է համարում հնից եւ նրանից, որ խօսում էր սրա (այսինքն՝ Հին կտակարանի) մէջ»: Բնագրի յայնմանէ բացառականը քերականորէն ավտարատի աստուկանի խնդրի է, ինչպէս ի հնոյն բացառականը. Իմաստի տեմակիտից այդ յայնմանէ վերահանի տակ մենք հասկանում ենք հոգին սուրբ, որ պատգամներ էր տալիս Հին եւ նոր կտակարաններում: Եզնիկն այդ մէկ նախադասութեամբ ամփոփել է սկզբում ասած հետեւեալ մտքերը. Մարկիոն «Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւով», մինչեւ ի պատգամաց հոգւոյն սրբաց հանել. զկէս աւետարանի ընտրել առնուլ՝ եւ զկէսն իբրեւ զիստան ի բաց թողուլ. նոյնպէս եւ զառաքելական թղթոցն. եւ զհին կտակարանն ամենեւին ուրանալ, որպէս թէ յանգամէ տուեալ իցեն Կէ ոչ ի բարւոյ (Մ էջ 10-111, Բ 253): Այսպիսով ամենեւին ընդունելի է յայնմանէ բացառականի «Եւ նրադ նից էր» թարգմանութիւնը, որ հաւանաբար նշանակում է «այդ պատճառով էր»: Անընդունելի է նաեւ «որ ի նմայն խաւսէր» բառերի «որի մասին խօսում է այնտեղ» տարօրինակ եւ մուլթ թարգմանութիւնը. մուլթ, որովհետեւ յատկէ է, թէ «այնտեղ» զերանուան տակ ո՞ր կտակարանն է հասկացւում:

Մարկիոնի երկրորդ դրոյթը, որ Եզնիկն ամփոփել է քննարկուող վերջին նախադասութեան մէջ, հետեւեալն է. Մարկիոն «Չյարուցիլն մարմնոյ արհ համարէ՞» — Մարկիոնը «Արհամարհում է մարմնի յարուցիլն»: Այս կարճ նախադասութեանը Եզնիկը յիշեցնում է Մարկիոնի հետեւեալ դրոյթը, որ ըստ կրթում ինքը քննադատելի եւ մերժելի է մի քանի էջում. «Այլ եւ յարուցիլն մարմնոյ չհաւատալ ուստի՞ իցէ Մարկիոնի եւ Մանեայ եւ այլոցն նոյնպիսիւնաց: Ասեն. Առաքելս ասաց՝ Թե մարմին եւ արիւն զարգայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն» եւ այլն (տե՛ս Մ 126-4-7, Բ 290-291 եւ շարունակութիւնը): Այսպիսով այս դրոյթը, որ քննարկուող հատուածում արտայայտուած է երեք բառանի կարճ նախադասութեամբ, կապ չունի առաջինի հետ: Իսկ Ա. Աբրահամեանը, հետեւելով Գ. Ուաշատուրեանին, խառնել է դրանք:

* * *

Այստեղ ընդհանուր ենք բուն թարգմանական ձխախնդրի վերաբերող մեր միւս գիտողութիւնները եւ նշում այլ կարգի թերութիւններ:

ա. Չթարգմանուած բառեր

Ա. Աբրահամեանը թերացել է թարգմանել բնագրի նշանաբան բառեր, որոնք ամենեւին աւելորդ չեն. ահա մի քանի օրինակ.

1. Ոչ ի մի միայն կողմն՝ ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին (Մ 18-27-28, Բ 18) — «Ոչ թէ միայն դէպի ատաղ է արշաւում» (37):

3. Դո՛ւ թարգմանուած չեն բնագրի ընդգծուած բառերը՝ «Ոչ միայն մէկ կողմ»:

2. Պատերազմում չարժին, ուր մեղաւոր եւ արդար առ հասարակ կոտորին (Մ 14-17-18, Բ 20) — «Պատերազմներ եւ տեղի ունենում, մեղաւոր ու արդար հաւասարապէս կոտորուած են» (38) :

Թարգմանուած չէ բնագրի ուր բառը :

3. Ու՛ր է սկիզբն եւ գործիչ տյնայիս անկատեհից, քայց եթէ իցէ ինչ չար գարաւքիւն, որ... (Մ 14-20-21, Բ 20) — «Ու՛ր է այսպիսի անպատեհութիւնների սկզբնապատճառն ու սրանք կատարողը, եթէ ոչ ինչ-որ չար գորութիւն, որը...» (38) :

Թարգմանուած չէ բնագրի իցէ բայը՝ «եթէ չլինի», որ այստեղ կարեւոր է, քանի որ Եդիիկի ընդդիմակացները հաւատում էին, թէ գոյութիւն ունի մի չար գորութիւն :

4. Յաղթութեան և պսակի ոչ ցանկանայցեն (Մ 29-27, Բ 57) — «Յաղթանակի չձգտեն» (56) :

Թարգմանուած չեն բնագրի եւ պսակի բառերը :

5. Չնմանէ յաւաստ էր, թե չես դու իմ որդի, եւ գմիւսմէն խոստուկ, քէ որդի իմ է (Մ 61-29-30, Բ 136) — «(Զրուանը) ուրացաւ՝ (ասելով),...» (96) : Ժողովուած է բնագրի գմիւսմէն բառը, որին հակադրուած է գմիւսմէն դեհանուրք. ուստի պիտի ասուէր՝ «(Զրուանը) ուրացաւ նրան...» :

6. Եթէ իբրեւ ի չարէ յաւաստ էր, ապա եւ յաւթեանն գմա չէր պարտալծանի տննի, այլ անդէն իբրեւ ի չարէ խորչի (Մ 61-31-32) — «Եթէ ուրախ ես չեմ, որպէս չարի... պիտի խորչէր չարից» (96) :

Թարգմանուած չէ բնագրի իբրեւ բառը. «նրանից պիտի խորչէր իբրեւ չարից» : Հմտ. նախադասութեան սկզբի «իբրեւ ի չարէ բառերը» :

7. Այլ յաղդոյն սնանայոյ՝ եւ ի մտաց իսկ անկամի մարդ (Մ 80-12, Բ 180) — «Ուղեղի գատարկութիւնուց մարդը ցնորուած է» (118) :

Թարգմանուած չեն բնագրի այլ եւ իսկ բառերը : Առաջինն այստեղ նշանակում է «այլեւ, այլ դէպքերում» : երկրորդը՝ «նոյնիսկ, անգամ, մինչեւ իսկ» :

8. Վասն լուսատու լինելոյ միայն արարան (լուսաւորքն) եւ ի նշանս եւ ի ժամանակս եւ յաւուրս, յամիսս եւ ի տարիս (Մ 82-25-26, Բ 185-186) — «Ստեղծուեցին՝ միայն լոյս տալու եւ ժամանակները, օրերը, ամիսներն ու տարիները նշանակելու համար» (122) :

Թարգմանուած չէ բնագրի ի նշանս հայցականը կամ թիբեւ թարգմանուել է որպէս «նշանակելու համար» : Գ. Ուշատուրեանի թարգմանութիւնն էլ նոյնն է (էջ 91) : Սակայն Եդիիկն այդ բառին աւելի մեծ կարեւորութիւն է տուել, քան թարգմանիչները : Դա երեւում է ոչ միայն դրան նախորդող «եւ» չափապիտի, որ դրէի ընդմիջարկում կարող է լինել, այլեւ անմիջապէս թափուրդ առումն նա արեւացքից է : «Ոչ իբրեւ զկենդանին, այլ իբրեւ ըզլուսատուս լուսատու լինել ի ներքոյ երկնից եւ զնշանս աստուածգիտութեան ցոյցանել, եւ զանձրեաց եւ զառչոց փոփոխմանց», որ ճիշտ է թարգմանուած՝ «... աստուածամանայման, ինչպէս նաեւ անձրեւների ու եղանակի փոփոխութիւնների նշանները ցոյց տալու համար» (էջ 122) : Կարծում ենք, որ առաջին նախադասութեան մէջ կատարուելիք որոպորութիւնը հիմա պարզ է :

9. Եւ այլոց անասնոց աչ նոյնպիսի (Մ 93-14, Բ 211) — «Եւ այլ անասունների (կենդանութիւնը) նոյնպիսին չէ» (135) :

Թարգմանուած չէ այլոց բառը : Պատճառը կարծում ենք այն է, որ

որանից անմիջապես առաջ Եղնիկն արտայայտուել է մարդկանց մասին. ուստի Թարգմանիչը խուսափել է այս այլոց բառից, քանի որ այն Թարգմանելով իբրև անասնոց զայականի որոշիչ՝ «միւս տնասուններէ», լռելեայն Եղնիկին վերադարձ կը լինէր այն միտքը, թէ նա մարդկանց հետ համարում է անասուններ։ Արդ Թարգմանիչը դիտէ, որ Եղնիկի համար մարդն «ասուն» եւ բանաւոր արարած է։ Մարիէսը Թարգմանել է «J'ame des autres animaux» (§ 303), այսինքն՝ «միւս կենդանիների հոգին»։ Կարծում ենք, որ այլոցը անասնոց սեռականի որոշիչը չէ, այլ բացայայտելու. ուստի նրա վրայ դնում ենք բուժ նշանը՝ «Եւ այլոց՝ անասնոց, ոչ նոյնպիսի», եւ հասկանում ենք՝ «Իսկ միւսներինը՝ կենդանիներինը, նոյնպիսին չէ»։ Մարիէսի Թարգմանութեան մէջ բոտորակէտների միջեւ առնելու էր animaux բառը։

10. Ընկզմի մասի ի պարտութիւն, յորժամ ուպականեալքն զանապապանութիւն գգնեալցում, և մահկանացուքս՝ զանմահութիւն, և սերմանեալք սկալութեամբ՝ զգալութիւն (Մ 128.15-17, Բ 296) — «Մահը պարտութիւն է կրում, Երբ ապականեալները անապականութիւն են ստանում, տկարութեամբ սերմանեալները՝ զօրութիւն» (180)։

Թարգմանուած չեն բնագրի շքնդգծուած բառերը։

11. Զի եքք պարզ բնութիւն էր հիւզն, եւ մեմալեքալ, եւ աշխարհս ի յադուածոցից եւ ի պէսպէս բնութեանց եւ ի խառնեալոց հաստատեալ է, անհնարին է ասել... (Մ 19.24-26, Բ 32) — «Եթէ հիւշէ պարզ մարմին էր եւ միատարր, անհնարին է ասել...» (44)։

Թարգմանուած չէ բնագրում շքնդգծուած ամբողջ նախադասութիւնը, որ Վենետիկեան հրատարակութեան մէջ էլ կայ։

բ. Խմբագրումներ

Թարգմանիչը բաղմիցս խմբագրել է Եղնիկի երկր Թարգմանելիս, այդպիսով վատ օրինակ դառնալով ուրիշներին։ Ահա օրինակներ, միայն օրինակներ մեր նկատած բաղմաթիւ խմբագրումներից.

1. Զի որ չար ինչ է, նորա ամեմայնին վնասակար է (Մ 33.5-6, Բ 66) — «Զէ՞ որ շարի ամէն ինչը վնասակար պիտի լինի» (60)։

Բաղմիցս երեւում է Եղնիկին այսպէս «խմբագրելու» մարմաջը։ Աւելորդ է հեղինակին վերագրել ճարտասանական հարցեր, ինչպէս արել է նաեւ ուրիշ տեղերում, եւ այս նախադասութեան Թարգմանութեան մէջ Եղնիկի է բայը մեղմացնել կամ ուժեղացնել «պիտի լինի»-ով։ Բնագրի իմաստն է. «Որովհետեւ ինչ որ շար (արարած) է, նրա ամէն ինչը վնասակար է»։

2. Թարգմանութեան մէջ Հարցական է դարձել նաեւ Եղնիկի հետեւեալ նախադասութիւնը. Զի սաքա իլեալ ի քաղաքաց եւ ի գիւղից... (Մ 65.31-32, Բ 146) — «Զէ՞ որ մարդիկ, քաղաքներից ու գիւղերից ելնելով...» (101), փոխ. «Որովհետեւ մարդիկ...»։

3. Նաեւ հետեւեալ նախադասութեան մէջ, ուր մեղանշումն աւելի ծանր է.

Զի՞ պիտոյ էր փպիտանին գովել եւ գանպիտանն պարսաւել, թե ինքն արարիչ է պիտանութեանն եւ անպիտանութեան (Մ 76.27-28, Բ 172) — «Ի՞նչ, անհրաժեշտութիւն կը լինէր պիտանին դոփելու եւ անպիտանին պարսաւելու. չէ՞ որ (այդ դէպքում) ինքը կը լինէր արարիչը պիտանութեան եւ անպիտանութեան» (114), փոխ. «Եթէ ինքն է արարիչը...»։

4. Արդ յայսպիսի իրս անհարթ-ս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցիմ, ե-
թէ չար ինչ բնութեամբ իցէ (Մ 33:28-29, Բ 67) — «Ահա այսպիսի աններ-
դաշնակ իրողութիւնները ճշտութեամբ չըմբռնելու պատճառով կարծեցիմ, թէ
չար բանը Հալքեամբ է (այգլպիսիմ)» (61) :

Թարգմանութեան ընդգծուած մասը ընազրի վերջին բառերի ճիշտ
Թարգմանութիւնը չէ : Մարիէսի հետ համաձայն ենք, որ դրանք նշանակում են
«ի բնէ չար ինչ-որ արարած գոյութիւն ունի» : Եւ իրօք, այս ամփոփիչ նախա-
դասութիւնը գրեւորց առաջ, բնութիւնից, յատկապէս գազաններից եւ բան-
ջարներից վերջրած օրինակներով նշնիկը ցոյց տուեց, որ «Եթէ մոզ իցէ եւ
յորի արարած գոյականն մասն գաղաւթեանն ասիցէ», «Գազանք իսկ, որ ի
չարէ արարչէ եկեալ են, ցուցանեն...», «նա թե եւ ի չարէ ինչ երես չարք ա-
րարեալ» եւ այլն, այսինքն՝ եթէ չար արարիչ գոյութիւն ունենար, ապա եւ
այլն : Այգլպիսի թուացող հակասութիւնները նկատի ունենալով՝ ընդգլխակա-
ցները կարծեւ են, թէ գոյութիւն ունի չար արարիչ, որ արարած է, Աստուծոց
է ստեղծուել, ինչպէս հիւզը, բայց իր հերթին առաջացրել է չար արարածներ,
դրանց պատճառն է դարձել :

Բացի խմատային կողմից, քերականութիւնն էլ թոյլ չի տալիս Թարգ-
մանի այնպէս, ինչպէս Թարգմանուած է, որով Թարգմանիչը ստիպուած է ե-
ղել փակագծերով աւելացնել մեկնաբանող «այգլպիսին» ստորոգելիական վե-
րագիրը :

5. Ոչ եթէ յՈրմգդի կամ ի յագելմ էր գաւրութիւնն, այլ... (Մ 62:2-
3, Բ 136) — «Զօրութիւնը ոչ թէ Որմգդի ու գոհաբերութեան, այլ... մէջ էր»
(96) :

Բնագրի կամ չաղկապն առանց անհրաժեշտութեան փոխաբերուել է
ու-ով :

6. Եւ ոչ աշակերտացն իւրոց հալածել չբաժանէր (Մ 67:15, Բ 150) —
«Եւ ոչ էյ իր աշակերտներին կ'առաջուրկէր հալածել» (103) :

Ոչ մի հիմք չկայ բնագրի հրամայէր բայը Թարգմանելու «կ'առաջա-
րկէր» : Նոյն սխալը տե՛ս ստորեւ թ. 12 :

7. (Գև.բ) ոչ երբեք գմարդիկ ի կռապաշտութիւն յաժարեցուցանենին,
եւ ոչ ի պէսպէս ազանգս փիլիսոփայից եւ հերձուածողաց (Մ 67:18, Բ 150) —
«Դեւերը... մարդկանց երբէք չէին մղի հաւատալու կռապաշտութեան, փրի-
սոփայական ու հերձուածողական զանազան աղանդների» (103) :

Բոլորովին աւելորդ է «հաւատալու» բառը, որ ընազրում չլինելու
պատճառով փակադծերի մէջ անգամ առնուած չէ : Աւելորդ է, որովհետեւ կը-
ռապաշտութեանը, ինչպէս փիլիսոփայական ու հերձուածողական աղանդնե-
րին «հաւատալ» չի աւուում . մարդիկ դրանք ընդունում են, դրանց կողմնակից
են լինում, հետեւում են եւ այլն :

8. Զվերջին հարուածն յառաջնումն ոչ ած ի վերայ մորա (Մ 74:24,
Բ 167) — «Վերջին հարուածը նրան ոկգրում չհասցրեց» (111) :

Առանց որեւէ անհրաժեշտութեան ու պատճառի, հարուածն յոգնա-
հին, որ անհրաժեշտ է, հզակի է Թարգմանուելի : Գ. Ուշատուրեանն ու Մար-
իէսը ճիշտ են Թարգմանելի :

9. Ընդէ՞ր աւիգէ Առաքեալ՝ քե հնազանդեցոց է փրկչին մերում հառ-
դերձ մաքաւամբ եւ սատմայ, եւ անկանեցոց է յիշխանութեմէ եւ ի պետութե-
մէ իւրմէ՞ որ աստուածամայն ամնամբ կամեցաւ (Մ 82:3-5, Բ 184) — «Եւ

չո՞ւ է անաքեան ասում, թէ՛ «Մահուան հետ մեր փրկիչին հնազանդուելու է նաեւ աստանան Երմ ընկնելու է իր իշխանութիւնից ու պետութիւնից, որովհետեւ անձամբ աստուածանայ կամեցաւ» (121) :

Բնագրի համեմատութեամբ աւելորդ են «որն» եւ «որովհետեւ» բառերը. առաջինի փոխարէն պիտի լինէր «եւ» ըստ բնադրի, երկրորդի փոխարէն «նա, որ» : Գ. Խաչատուրեանը ճիշտ է թարգմանել :

10. Երեւ զամենայն աւր շրջիցին (երկինք)՝ զիա՞րդ զարեգակն աւար աւար ի նոյն արեւելս ամիցեմ եւ զլուսին՝ յամսեան հազիւ ի նոյն տեղիս (Մ 83.10-11, Բ 187) — «Եթէ միշտ պատուում է (երկինքը՝ Մ. Մ.), ինչպէ՞ս է, որ արեւն ամէն օր նոյն արեւելքի մէջ է բերում, իսկ լուսինը՝ հազիւ ամիսը մէկ, նոյն տեղերը» (122) :

Բնագրի զամենայն աւր բառերը Գ. Խաչատուրեանը համեմատաբար թարգմանել է «ամբողջ օրը», իսկ Ա. Աբրահամեանը խմբագրելով՝ «միտ», ցոյց տալու համար, որ գիտէ, թէ մատերիան անընդհատ շարժման մէջ է : Սակայն նրա «միտ» սխալ թարգմանութիւնը ամբողջովին ջնջում է բնագրի զարմացական կամ հարցական միտքը այն մասին, որ եթէ երկինքը մէկ ամբողջ օրում կատարէր իր պտոյտը, «զորմէ ասե՛ն արտաքին իմաստունքն, թէ մերթ ժամերն ծածկեն պուշտութիւնս եւ մերթ յայտնեն» (Եգնիկ, նոյն տեղում), ապա նա ինչպէ՞ս արեւը օրը-օրին արեւելքի նոյն կէտը պիտի բերէր, իսկ լուսինը՝ մէկ ամսում հազիւ նոյն տեղերը :

11. Այլ ի փարձ իրացն այլագգ յայտ առնի, դի աստեղքն, որ գցայց յերկինս եմ, եւ գցերիկ անդէմ գտանիմ (Մ 83.17-18, Բ 187) — «Բայց իրողութիւնների փորձից ուրիշ բան է երեւում — Աստղերը, որ գիշերը երկնքում են, դերեկն էլ են այնտեղ դառնում» (123) :

Բնագրի զի «որովհետեւ» չաղկապը փոխարինուած է տուեալ դէպքում հայերէնի կէտադրութեանը խորթ եւ անօգուտ զծիկով. դրա ջնջումով թուլանում է «փորձ իրացն» :

12. Յաստեղատունսմ մտանել (Մ 85.16, Բ 191) — Մտնում են աստղատունը» (125) :

Ո՛չ անեզական յոգնակին եղակի թարգմանելու ոչ մի պատճառ չկայ, այլ նոյնիսկ սխալ է, քանի որ աստեղատները շատ են : Գ. Խաչատուրեանը ճիշտ է թարգմանել :

13. Այլոց զիա՞րդ հրամայէր զկանայս հասարակաց համարել, եւ ոչ իւրում կնոջ եւեթ սկել (Մ 100.4-5, Բ 226) — «Ուրիշներին ինչպէ՞ս էր առաջարկում կանանց բոլորին համարել եւ ոչ թէ միայն սեփական կնոջ հետ լինել» (143) :

Բնագրի երամայէր բայն աւելի սառսիկ իմաստ ունի, քան պարզ «առաջարկե՛ր», որին պատշաճականը կարող էր հաւանութիւն տալ կամ այն մերժել, իսկ հրամայուածը՝ ոչ : Այս բառի թոյլ թարգմանութիւնը կրկնուած է ուրիշ տեղերում (տե՛ս ստորեւ թ. 19) :

Սկիւ բայը նշանակում է «արթուն կալ, ուշ ունել, հսկել», որի համար ՆՀԲ-ում իրբեւ վկայութիւն բերուած է նաեւ այս նախադասութիւնը : Եթէ Եգնիկը գրել է «բերում կնոջ եւեթ սկել», ապա ինչ՞ «ուշադրութիւն դարձնել (կամ՝ «հսկել») միայն իր սեփական կնոջ», բոլորովին աւելորդ է նրա գրածը գոհակացնել եւ թարգմանել «միայն սեփական կնոջ հետ լինել» :

14. Եւ այնպէս ոչ եթող երբեք Աստուած զաշխարհս առանց *յիկայութեան* (Մ 102.1, Բ 230) → «Եւ աշխարհս առաւելաւ աշխարհէ երբեք չթողցեց առանց Աստուածաշաշտութեան» (146.1) :

Ո՛ր բառարանային եւ ո՛չ էլ բնագրային հիմք կայ վկայութիւն բառը «աստուածապաշտութիւն» թարգմանելու : Աստուած մարդարէններ միջոցով միշտ էլ վկայել է տուել իր գոյութեան մասին :

15. Եւ այնպէս կարգէ զաշխարհէ եւ *գարարածոց*, որպէս արեւմեցի աշխարհ (Մ 106.32, Բ 243) → «Եւ աշխարհի ու (նքա) ստեղծման մասին խօսում է աշխարհս, ինչպէս Օրէնքն է պատմում» (152) :

Զարմանալի է, որ արարածոց «արարածներ» բառը թարգմանուել է «աշխարհի ստեղծում» :

16. Մի երդմուցում (Մ 120.20, Բ 276) — «Զերդուես» (169) :

Զերդուէ՛ք՝ ինչի՞ց դրուում՝ թարգմանելը անհրաժեշտ է համարել բնագրի յղեալին թարգմանել եզակի. մինչդեռ, յաջորդ էջում, կրկնուած այս նոյն յղեալին թարգմանել է յղեալի՝ «Զերդուէք» (էջ 170) :

17. Եւ եթե պիղծ ինչ եին *կերակուրքն*, նախ իմէմ իսկ ոչ նաշակէր ի նոցանէ, եւ ապա այլոց հրաման տալը չնաշակել (Մ 125.6-7, Բ 280) → «Եւ էթէ (մտով) կերակուրքներ պիղծ լինէին, նախ հենց ինքը նրանցից չէր ուտի եւ ապա ուրիշներին չէր առաջարկի ուտել» (171) :

Անկողմ է «մոռի» բառը : Եղնիկը մանրամասն բացատրում է հետեւեալ դրոյթը. «Նոյնպէս վասն կերակրոց (առանց մոռի կամ անմիա կերակուրքների տարբերութեան. Մ. Մ.) եւ ի հնումն եւ ի նորումս դասանմէ, զի յԱստուծոյ տուեալ են ի դարման» (Մ 125.1-2, Բ 279). այս նախադասութեան նոյն կերակուր բառն իր տեղում թարգմանուել է «ուտելիք», առանց «մոռի»-ի տարբերուման : Յարակից էջերում հեղինակը միշտ խօսում է կերակուրների մասին ընդհանրապէս, եւ թարգմանիչը անհրաժեշտ չի նկատի, որանց մէջ միս աւելացնել, այլ «կերակուր» բառից խուսափել է «ուտելիքներ» դոյախանը գործածելով (էջ 174) :

Թարգմանութեան «առաջարկել» («չէր առաջարկել») բայը թոյլ է բերեալ իրաւան տայր յարադիր բայի համեմատութեամբ :

18. Կուսմիք պրոյն եկեղեցւոյ... վասն առաւել սիրելոյ զԱստուած, ի բարութե արարածոց Աստուծոյ հրաժարեմ (Մ 124.15-16, Բ 287) — «Սուրբ եկեղեցու կոյսերը... առածուն առաւել չափով սիրելուց են հրաժարուած նրա ստեղծած քարիքներից» (175) :

Բնագրի ի բարութե արարածոց բառերը թարգմանուել են «ստեղծած բարիքներից» : Ո՛ր բարիքներից՝ անհասկանալի է, քանի որ կոյսերը ոչ թէ Աստուծոյ «ստեղծած բարիքներից» են հրաժարուում, այլ աժոյսնութիւնից :

Մի վերջին օրինակ յատուկ խմբագրութեան.

19. Ոչ երբեք սերմանցիկ զգարի եւ հնձեցիկ ցորեան (Մ 127.23-24, Բ 294) — «Ոչ մի ղէպքում ցորեն չցանցիկ ու զարի հնձեցիկ» (179) :

Բնագրի «ցորեան» եւ «զարի» բառերը փոխել են իրենց տեղերը թարգմանութեան մէջ :

Գ. Երկիմաստ քարգմանութիւններ

Թարգմանութեան մէջ պահում ենք բառեր եւ նախադասութիւններ, որոնց իմաստը յստակ չէ : Տանք օրինակներ.

1. Նոյնպէս եւ ոչ գիրոյ, եւ ոչ զգրոյ, եւ ոչ գաւոյ, եւ ոչ գիւղացի տականց, եւ ոչ գործարարաց, եւ ոչ զխաւարէ ճառէ ինչ Մովսէս. *զորոյ յերկուց ի մեծ անտառոցն, յերկնից եւ յերկրէ, պարտ է իմանալ, քեւ ամեն այն ինչ որ ի միջի նոցա գտանի՝ հարկ է զի ընդ նոսին արարեալ իցէ (Մ 86·21-24, Բ 194) — «...Դրանց վերաբերեալ պէտք է իմանալ երկու մեծ անօթներէց՝ երկնքից ու երկրից, որովհետեւ...» (126) :*

Թարգմանութեան սկիզբն ու վերջաւորութիւնը ճիշտ են, յատկ չէ միայն մէջբերուած տողը: Յստակ չէ նաեւ Գ. խաչատուրեանի թարգմանութիւնը. «Այս բոլորը պէտք է իմանալ երկու մեծ անօթներէն՝ երկնքէն ու երկրէն» (95): Երկու մեծ անօթներն են պատմելու նրանց մասին...: Բնուորի նախագոտութեան մէջ լռելիայն իմացում է՝ «...որ երկու մեծ անօթներէց՝ երկնքից ու երկրից (ստեղծուած) պէտք է համարել»: Ճիշտ է թարգմանել Մարիէսը (պարբ. 281): Երկնքն ու երկիրը մեզ ոչինչ չեն կարող իմացնել կրակի, ջրի, օդի եւ բնութեան միւս երեւոյթներէ մասին:

2. Ընդէ՞ր ոչ ամբոցոյց գիւր տեղին, զի մի լինէր անգր մոտ հսկա... քակարդին՝ որ դայր եւ ապստամբեցուցանէր զարարածս նորա ի նմանէ (Մ 111·15-16, Բ 254) — «Ինչո՞ւ չամբոցնեց իր տեղը, որ այնտեղ մոտք չորդորէր հակառակորդը, որը իր արարածներին շարունակ ապստամբեցնում էր իր գէժ» (157-158) :

Թարգմանուած չէ բնագրի գայր «գալիս էր» բայը: Աւելորդ է թարգմանութեան մէջ «շարունակ» բառը: Քանի որ ժամանակակից հայերէնում իր ստացականը սովորաբար յղում է նախագոտութեան երկթակային, ուստի կարելի է ենթադրել, որ թարգմանութեան մէջ այդ նոյն բառը վերաբերում է «որը» ենթակային. իսկ սրա յարաբերեալն է «հակառակորդը»: Ուստի դուրս է գալիս, որ հակառակորդը գալիս էր (որ թարգմանուած չէ) եւ իր սեփական արարածներին ապստամբեցնում էր իր՝ այսինքն՝ իր իսկ գէժ: Այնինչ, բնագրում ունենէր «արարածս նորա ի նմանէ», այսինքն՝ «նրա արարածները նրա գէժ»:

3. Նա եւ գերեւելի հաստատութիւն, որ ի ջուրց մեկնեցաւ, երկին լարգմանեցին եթամասումն (Մ 114·8-9, Բ 261) — «Նաեւ այս երեւցող հաստատութիւնը, որ ջրերից կազմուեց, եթանասունը (թարգմանիչները) 'Իրկին' թարգմանեցին» (161) :

Նոյնիսկ արեւելահայ ընթերցողին անհասկանալի կը մնայ թարգմանութեան «հաստատութիւն» բառը, կը թուայ, թէ խօսքը Լեւիւրի մասին է. այստեղ այդ բառը պարզապէս նշանակում է «երկինք», Ֆրանսերէն firmament, ինչպէ՞ս Մարիէսը թարգմանել է (Յ 378), յատկենքէն firmamento քառ նոր հայկազեան Բաղարանի:

Բնագրի մեկնեցաւ «բաժանուեց, անջրպետուեց, զատուեց, անջատուեց» բայը թարգմանուել է «կազմուեց», հակառակ զարարի բառարաններին: Աստուածանչի այն տեղում, որ ակնարկում է եղնիկը, այս բայի փոխարէն գործածուած է անջրպետել բայը. «Եւ արար Աստուած զհաստատութիւնն եւ անջրպետեաց Աստուած ի մէջ ջրոյն, որ ի ներքոյ հաստատութեանն, եւ ի մէջ ջրոյն, որ ի վերոյ հաստատութեանն: Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւնն երկին» (Մնգ. Լ, 7-8) :

4. Ցաւրինականն, որ եհարց ցնա... (Մ 121-8, Բ 277) — «Որինաւորսն, որ իրեն հարցրեց...» (170) :

Կարծում ենք, որ ժամանակակից Հայի համար «օրինաւոր» բառն ածական է՝ «օրինական, օրէնքի համաձայն, ոչ ապօրինի» : Մինչդեռ բնագրի այս նախադասութեան մէջ եւ Աւետարանում, որ այստեղ ակնարկում է հեղինակը, այդ բառը նշանակում է «օրէնադէտ, օրինաց վարդապետ», ինչպէս բացատրում է Նոր հայկազեան բառարանը :

«Իրեն» գերանունն փոխարէն նախընտրելի է «նրան» :

դ. Թարգմանութեան մէջ տեսնում ենք սխալ մեկնաբանութիւններ փակագծերում եւ աւերգաւորւած մէջբերումների աղբիւրների սխալ մատնանշումներ .

1. Զորս կոչեաց ոչ միայն ի Հրեից, այլ եւ ի հեթանոսաց (Մ 75-22, Բ 169) — «Պրոնց կանչեց (որպէս քարկոտորեալ եւ ողորմութեան անօրէն) ոչ միայն Հրեաներից, այլեւ հեթանոսներից» (113) :

Եղնիկն այս տողերը մէջբերել է Պօղոս առաքեալի՝ Հռոմացիցիներին դրած Թղթից, ուր տուեալ տեղում յռելայն չեն հասկացում Թարգմանութեան մէջ փակագծերում աւելացուած բառերը : Ոտքն այն մասին է ախտեղ եւ եղնիկի երկի տուեալ տեղում, թէ Աստուած մարդկանց իրեն է կանչում ոչ միայն Հրեաներից, այլեւ հեթանոսներից : Գ. Պաշտօնաբանը, որպէս բարի եկեղեցական, փակագծերում (դժիկներում) աւելացրել է միայն «ողորմութեան անօրէններ» սխալ բացատրութիւնը : Ա. Արքահամեանը զրանով չի բաւարարուել, ինչպէս տեսանք : «Բարկութեան» կամ «ողորմութեան» մեկնաբանութիւնները դէմ են եղնիկի դրածին . «Ոչ նա (Աստուած) անաթա քարկոտորեալ կազմէ ի կորուստ եւ ոչ անաթա ողորմութեան ի փառս» (Մ 75-15-16) :

2. Մի Աստուած ի վերայ ամենեցուն եւ ընդ ամենեւեան եւ ամենայնիւ (Մ 75-23-24, Բ 169) — «Մէկ աստուած՝ բոլորի վրայ, բոլորի հետ ու բոլորի մէջ» (113) :

«Բոլորի մէջ»-ը չի կարող ամենայնիւ դործականի Թարգմանութիւնը յիշել նրա համար, ով յարգում է դրաբարի քերականութիւնը : Գ. Պաշտօնաբանը նոյնպէս Թարգմանել է Ա. Արքահամեանի պէս (Հակոառկը հակադէպ) : Հաւանաբար պատճառն այն է, որ Եփեսացիներին ուղղուած Թղթում (Գ, 6), որից մէջբերել է Եղնիկը, կարդացել են «յամենեւին» : Սակայն երկու Թարգմանիչներն էլ չեն զոլուցացրել (ընթերցողին) : Մարիէսը 568 ծան. մէջ մանրամասն քննել է Թղթի յունարէն բնագրի համապատասխան տողը, ինչպէս Հայերէն Թարգմանութիւնը, իլիցցրել է Շմիդի, Վերելի եւ Գ. Պաշտօնաբանի Թարգմանութիւնները եւ կանց առել համէն ձեւով, ամէն տեսակէտով : Թարգմանութեան վրայ (պարբ. 245) . ծանօթութեան մէջ աւելացրել է, որ Եղնիկի ամենայնիւ արտայայտութիւնը եւ իր բառացի Թարգմանութիւնը ամփոփումն է «ի վերայ ամենեցուն եւ ընդ ամենեւեան» արտայայտութիւնների : Մէջ կողմնակից ենք այս մեկնաբանութեան :

3. Ըստ այմմ՝ թե եմ ներքինիք, որ զանգինս իւրեանց արարին ներքինս վասն արքայութեանն երկնից, ինեւ ի յարութեանն հաւատար հրշտակապ (Մ 124-18-19, 288) — «Ըստ այն (խօսքի), թէ՛ Կան ներքինիներ, որոնք իրենց ներքինի դարձրին երկնքի արքայութեան համար, որպէսզի յարութեան ժամանակ նվաճուեն Հրէշտակներին» (175) :

Այստեղ Թարգմանական միակ սխալն է «նմանուն» փոխ. «հաւա-

սարուն» : Թարգմանիչը լուսարար ուշադրութիւն չի դարձրել, թէ ընկերի ո՛ր բառերն են բուն հեղինակին, եւ որս'նք մէջընթացումն էր են : Ինչպէս Գ. Խաչատուրեանն ու Մարիէսը, ինքն էլ է «մասնացոյց տնում», թէ այստեղ բառեր ունենք Մատթ. Ժ. 12-ից. սակայն Աւետարանի բնագրից դուրս են «լինել ի յարութեանն հաւասար հրեշտակաց», թարգմանութեան՝ «որպէսզի յարութեան ժամանակ նմանուեն հրեշտակներին» բառերը, որ, սակայն, թարգմանիսն առել է չակերտների մէջ իրարեւ Աւետարանին : Պարզութիւն է, որ նա առանց անձամբ ստուգելու վստահել է Գ. Խաչատուրեանին (էջ 143) : Մարիէսի մէջընթացումը կամ իրրեւ ալիպիսին չակերտների մէջ առած բառերը համապատասխանում են Աւետարանի թնայրին (պարբ. 413) :

* * *

Եզրակացութիւն

Եղիկի երկի Ա. Ա. Աբրահամեանի արեւելահայերէն թարգմանութեան ներածութեան մէջ արտայայտուած են խիստ վիճելի կարծիքներ երկի նպատակասլացութեան եւ «խոշոր նշանակութեան» մասին :

Թարգմանիչը բանասիրական կոպիտ սխալ է գործել թարգմանութիւնը սկստարեւոյ (կամ շփերանայելոյ) Մարիէսի եւ Մերսիէի զիտական ու ձեռագրային հրատարակութիւնից :

Թարգմանիչը շատ սնկամ արեւելահայերէնի է վերածել Գ. Խաչատուրեանի արեւմտահայերէն թարգմանութիւնը, անքննադատաբար կրկնելով նրա բաղմամբիւ սխալները եւ առանց ստուգելու սուրբգրային մէջընթացումների նրա նշած աղբիւրները : Ինքն էլ թոյլ է առել բաղմամբիւ սխալներ, բառերի բացթողումներ եւ սխալ մեկնաբանութիւններ, որոնք ալիպիսի գրքի թարգմանութեան մէջ աններելի են :

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԻԱՆ.

Երուսաղէմ
Վերջ

